ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1991-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Կատարող՝ Մանուկյան Չնաշխարհիկ

Շիրակի մարզի Գյումրու թիվ 27միջնակարգ դպրոց,

Հայոց լեզու և գրականություն խումբ

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3-4
Գլուխ առաջին- Հայաստանի Հանրապետության հանրակրթական բարեփոխումների ռազմավարությունը 1991-1998թթ.----------5 -7
Գլուխ երկրորդ Հայաստանի Հանրապետության հանրակրթական բարեփոխումների ռազմավարությունը 1998-2019թթ. ----------8- 15
Եզրակացություն----------16-19
Օգտագործված գրականության ցանկ ----------20

Ներածություն

Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումները սկսել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ստեղծված տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում՝ նպատակ ունենալով ինտեգրվել ժողովրդավարական և իրավական զարգացման համաշխարհային միտումներին:

Հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետությունում անկախությունից ի վեր կրթական համակարգում մշակված բարեփոխումների քաղաքականության և իրականացման ռազմավարությունները, դրանց արդյունավետությունն ու ազդեցությունը երկրի առաջընթացի և հասարակական կյանքի վրա, ինպես նաև առաջացրած մարտահրավերները:

Հետագա տարիներին բարեփոխումների քաղաքականությունը միտված է եղել համակարգային խնդիրների լուծմանը, վիճակի կայունացմանը և հետագա զարգացան համար նախադրյալների ստեղծմանը: Համաշխարհային բանկի վարկային ծրագրերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել նոր ուսումնածրագրային նյութերի մշակման, հաստատությունները ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու, դասավանդման գործընթացում առավել որակյալ մասնագետներ ներգրավվելու, մասնագետների վերապատրաստման աշխատանքներին:

Սակայն բարեփոխումների մշակված քաղաքականությունը և իրականացված ռազմավարությունը հիմնված չլինելով փաստերի, հետազոտությունների և վիճակագրական տվյալների և դրանց

վերլուծության հիման վրա, կրթության համակարգը դեռևս հեռու են պահել իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, առաջացրել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

Հոդվածում քննարկելու ենք Հայաստանի Հանրապետությունում անկախությունից ի վեր կրթական համակարգում իրականացված բարեփոխումների քաղաքականության ռազմավարությունները, դրանց արդյունավետությունն ու ազդեցությունը երկրի առաջընթացի և հասարակական կյանքի վրա, ինպես նաև առաջացրած մարտահրավերները:

Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումներն սկսել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում՝ **նպատակ ունենալով ժողովրդավարական և իրավական զարգացման համաշխարհային միտումներին ինտեգրվելը:**

Հետագա տարիներին բարեփոխումների քաղաքականությունը միտված է եղել համակարգային խնդիրների լուծմանը, վիճակի կայունացմանը և հետագա զարգացան համար նախադրյալների ստեղծմանը: Համաշխարհային բանկի վարկային ծրագրերով ձեռնամուխ են եղել նոր ուսումնածրագրային նյութերի մշակման, հաստատությունները ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու, դասավանդման գործընթացում առավել որակյալ մասնագետներ ներգրավվելու, մասնագետների վերապատրաստման աշխատանքներին

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1991-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀՀ կրթության ներկա համակարգը հիմնվել է 1918-1920 թվականներին՝ Հայաստանի առաջին հանրապետության կարճատև գոյության ընթացքում և զարգացել խորհրդային իշխանության տարիներին (1920-1990թթ.):

Մինչև 1991թ. Հայաստանի տնտեսության և սոցիալական ոլորտի բոլոր բնագավառները, այդ թվում կրթությունը, լինելով ԽՍՀՄ կրթահամակարգի բաղկացուցիչ մասը, կարգավորվում էին խորհրդային իշխանության կողմից միասնական կարգով:

1991թվականից Հայաստանի անկախ պետականության հաստատումով երկրում առաջացած հասարակական և տնտեսական փոփոխությունները չէին կարող չանդրադառնալ կրթական համակարգի վրա: Հայաստանի կրթական համակարգը պետք է դառնար մրցունակ և առաջատար զարգացող ոլորտ, և այս ոլորտում կառուցվածքային ու բովանդակային վերափոխումներն անխուսափելի էին: Տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, կարևորվում էր ժողովրդավարական և իրավական զարգացման համաշխարհային միտումներին ինտեգրվելը: Ուստի, կրթական համակարգի արդիականացման և վերափոխումների առաջացած խնդրի լուծումը պահանջում էր ոլորտում լուրջ քաղաքականության մշակում և իրագործում: Սակայն անցումային փուլում ի հայտ եկած մի շարք գործոններ դանդաղեցրին և խոչընդոտեցին համակարգի բարեփոխումը և առաջիկա զարգացումը: Դրանցից հիմնականներն են՝ 1988թ-ի

երկրաշարժը, արցախյան պատերազմը, սոցիալական խնդիրները, օրենսդրության բացակայությունը: Բարեփոխումներն արգելակող հիմնական պատճառներից էին պետության ֆինանսական դժվարությունները, որոնք թույլ չէին տալիս անհրաժեշտ ներդրումներ կատարել նոր ուսումնաձրագրային նյութերի մշակման, հաստատությունները ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու, դասավանդման գործընթացում առավել որակյալ մասնագետներ ներգրավվելու, մասնագետների վերապատրաստման համար:

Մինչև ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1999 թվականի ապրիլի 14-ին «Կրթության մասին» օրենքի ընդունումը,[1] կրթական համակարգը կանոնակարգվում էր կրթական քաղաքականության հայեցակարգերով, և շարունակում էին գործել դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ընդունված նորմերը, որոնք պետք է ժամանակավորապես հիմք ծառայեին կրթական համակարգի բարեփոխումների և հետագա զարգացման համար: Սակայն դրանց զգալի մասը կենսունակ չէին և հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով չէին կարող բավարարել առկա իրավիճակը: Փաստորեն պետական կրթական քաղաքականության և կրթական համակարգի զարգացման ծրագրերի բացակայությունը երկար ժամանակ թույլ չէր տալիս սկսել համակարգի իրական բարեփոխումները, իսկ դրա առանձին փուլերի համար ընդունվող նորմատիվներն ու կանոնակարգերը թեև որոշ խնդիրների ժամանակավորապես լուծում էին տալիս, սակայն ողջ համակարգի տեսանկյունից բերում էին հիմնախնդիրների խորացման:Վիճակը փոխվեց «Կրթության մասին» օրենքը ընդունելուց հետո, երբ այն սահմանեց կրթության

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120940

բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթական իրավունքի պետական երաշխիքները, կրթական համակարգի հիմնական կառուցվածքային տարրերը՝ կրթական ծրագրերը, դրանց նպատակներն ու իրականացման եղանակները, կրթության ձևերը, ուսումնական հաստատությունների տիպերն ու կարգավիճակները, կրթական համակարգի կառավարման բնագավառում տարբեր մարմինների իրավասությունները, կրթական համակարգի տնտեսական հիմքերը, սոցիալական երաշխիքները: Միաժամանակ օրենքը բավարար հիմքեր դրեց կրթական համակարգի կառուցվածքային վերափոխումների համար:

Հայաստանի կառավարությունը Համաշխարհային բանկի հետ 1998թ-ին կնքված համաձայնագրով հնարավորություն ստացավ ցածր տոկոսադրույքով տրամադրած վարկի միջոցով իրականացնել տարբեր ուղղություններով բարեփոխումների ծրագրեր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1998 -2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1998 թվականից հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝1998-2002թթ, 2002-2009թթ., 2009-2014, 2015-2019թթ:

Առաջին փուլում «Կրթության կառավարում և ֆինանսավորում» վարկային առաջին ծրագրի բարեփոխումները հիմնականում ուղղված էին հանրակրթության կառավարման ապակենտրոնացմանը և դպրոցների ինքնավարության աճին, հանրակրթության կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրմանը, նոր դասագրքերի ստեղծմանը, հանրակրթության կազմակերպաիրավական կարգավիճակի վերանայմանը և ղեկավար կադրերի կառավարման որակի բարձրացմանը, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը:[2]

Սակայն տարբեր պատճառներով վերը հիշված բոլոր ուղղություններով իրականացվող բարեփոխումները ոչ միայն չլուծեցին առկա խնդիրները, այլ նոր մարտահրավերներ առաջացրին կրթական համակարգի համար: Կարծում ենք գլխավոր պատճառներից մեկը թերևս այն էր, որ բարեփոխումների քաղաքականությունը հիմնված չէր փաստերի հետազոտությունների և վիճակագրական տվյալների և դրանց վերլուծության հիման վրա:

Կրթական համակարգում մասնավորապես, լուրջ խնդիրներ առաջացրեց դպրոցների ֆինանսավորման նոր կարգը: Հանրապետության կառավարության 1999թ. հունիսի 1-ի, թիվ 377

[2] http://www.cfep.am/hy/archived/

որոշմամբ հաստատվում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիրը, որով դպրոցների ֆինանսավորումը 1999 թվականի սեպտեմբերի 1-ից իրականացվելու էր դրանց վերադաս կառավարման մարմնի միջոցով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման ժամանակավոր կարգով հաշվարկված և հաստատված նախահաշիվների հիման վրա:[3] Թեև ֆինանսական առումով պետությունը շահեց ըստ դասարան կոմպլեկտի ֆինանսավորումից անցում կատարելով դեպի աշակերտ թվի ֆինանսավորման, բայց անմխիթար վիճակի մեջ գցեց դպրոցը: 30-35 աշակերտներից բաղկացած դասարաններում ուսուցիչը բնականաբար չէր կարող մեկ դասաժամի ընթացքում բոլոր աշակերտներին անհատական մոտեցում ցուցաբերել, վերահսկել նրանց վարքը, պահպանել հետադարձ կապ, և ընդհանարապես, որակ ապահովել:

Կրթական համակարգի համար լուրջ մարտահրավեր են դարձել դպրոցների կառավարման գծով բարեփոխումները, որոնք թեև ենթադրում էին հանրակրթության ապակենտրոնացում, դպրոցների ինքավարության աճ և ղեկավար կադրերի կառավարման որակի բարձրացում, իրականում ընդամենը հանրակրթության ուղղահայաց կառավարումը փոխարինեցին հորիզոնականով: Բարեփոխումների քաղաքականության մշակողները հաշվի չէին առել դպրոցի տնօրենների և ուսուցիչների ընտրության կոռուպցիոն ռիսկերը: Պատահական չէ, որ դպրոցների կառավարման նոր համակարգը չկարողացավ ապահովել ոչ դպրոցների ինքնավարությունը, ոչ էլ տնօրենների և ուսուցիչների արդար ընտրությունները: Ավելին՝ դպրոցի կառավարման գծով իրականացված բարեփոխումների արդյունքում դպրոցը թաթախվեց

[3] http://www.irtek.am/views/act.aspx?aid=7157

կոռուպցիայի մեջ, զրկվեց բարձորակ մասնագետներից, և որ ամենավատթարն է՝քաղաքականացվեց: Պակաս կոռուպցիոն ռիսկեր չէր պարունակում դասագրքաստեղծման գործընթացը, որն իրականացվում էր մրցույթի ձևով:[4]

«Կրթության կառավարում և ֆինանսավորում» առաջին վարկային ծրագրի կարևոր ուղղություններից մեկը, թերևս ուսուցիչների և տնօրենների վերապատրաստումներն էին: Սակայն դրանք էական փոփոխությունների չհանգեցրին ուսուցչի մասնագիտական զարգացման առումով, քանի որ դրանց հիմքում ընկած չէր ուսուցչի մասնագիտական առաջխաղացումը:Եվ ընդհանրապես չէր գիտակցվում ուսուցչի կարևոր դերը բարեփոխումների իրականացման գործում: Բացակայում էր ուսուցչի վարքագծի վրա անդրադարձող և աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա ազդող կարևորագույն և ամենաարդյունավետ միջոցներից մեկը՝ մոտիվացիան: Բնական է, որ մոտիվացիայի բացակայության դեպքում ուսումնական հաստատությունները չէին կարողանա ապահովել սահմանված չափորոշիչներին համապատասխանող կրթական ծառայություններ:

Բարեփոխումների հաջորդ փուլերում ևս այս կարևորագույն հանգամանքը հաշվի չէր առնված: Խոսքը վերաբերում է «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ ծրագրերին, որոնք համապատասխանաբար իրականացվեցին 2003-2009 և 2009-2014 թվականներին:

2003-2009թթ. իրականացված «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին ծրագրի նպատակն էր ուղղորդել Հայաստանի կրթական համակարգի զարգացումը դեպի գիտելիքահեն տնտեսության պահանջներ՝ ապահովելով հասարակության սոցիալ-

[4] https://hkdepo.am/up/docs/ 20 eduction_21.02.pdf

տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ: Ծրագիրը բաղկացած էր չորս ենթածրագրերից՝ հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ստեղծում, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում, ուսուցիչների մասնագիտական զարգացում, հանրակրթության և համակարգի կառավարման բարելավում և արդյունավետության բարձրացում: Այս ծրագիրը ևս լուրջ մարտահրավերներ առաջացրեց կրթական համակարգում: Մասնավորապես, հանրակրթության բարեփոխումների շրջանակում իրականացված դպրոցների օպիմալացման հետևանքով 37 դպրոցներ փակվեցին, փոքր դպրոցները միացվեցին խոշոր դպրոցներին, տեղի ունեցան հաստիքների կրճատում, կադրերի մեծ կորուստ, բազմաթիվ ուսուցիչներ դուրս մնացին դպրոցներից մանկավարժական կրթություն չունենալու պատրվակով:

Մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ անկախության տարիներից ի վեր իրականացվող կրթական բարեփոխումների ռազմավարությունների մշակման և իրականացման արդյունքներին, ինչպես նաև կրթական համակարգի առաջ ծառացած մարտահրավերներին: Դրանցից յուրաքանչյուրը պահանջում է գիտական լուրջ ուսումնասիրություն: Սակայն չենք կարող չանդրադառնալ թերևս հանրակրթության որակի բարձրացումն ապահովող կառույցներից մեկի՝ ավագ դպրոցի հիմնախնդրին, փաստելով, որ ավագ դպրոցը Հայաստանում չի կայացել:[5] Ընդ որում այս մասին փաստել է ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն

[5] https://www.times.am/?p=161992&l=am

Մկրտչյանը, նշելով, որ ավագ դպրոցը պետք է լիներ այն տեղը, որ այն ավարտելով աշակերտը կարողանար նախնական մասնագիտական կողմնորոշում ձեռք բերեր, որը նրան կօգներ մտնել բուհական կյանք: Նախարարը անդրադարձել էր նաև հոսքային դասարանները բեռնաթափելու, մասնագիտական կարողություններին ուշադրություն դարձնելու, որակը մեխանիկական շարունակությունից տարանջատելու խնդիրներին:[6] Միանշանակ է, որ դրանց իրականացման համար գումար էր անհրաժեշտ, որը չտրվեց: Երեսուն հոգանոց հոսքային դասարանները, չմոտիվացված աշակերտները, ավագ դպրոցի համար չվերապատրաստված ուսուցիչներն իրենց ցածր աշխատավարձով, վարկաբեկեցին ավագ դպրոցի գաղափարը: Ելնելով կառավարության կողմից կրթության ոլորտի ռազմավարական զարգացման առանձին խնդիրների լուծման և կրթության ոլորտում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախկինում իրականացված վարկային ծրագրերի արդյունքների ամրապնդման և շարունակականության ապահովման, մասնավորապես կրթության որակի բարձրացման անհրաժեշտությունից, 2015 թվականին ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է լինում «Կրթության բարելավում» վարկային ծրագրի իրականացմանը, որը տևելու էր մինչև 2019 թվականը: Այս ծրագիրը, որի հիմքում ընկած էր «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ ծրագրերի արդյունքները,[7] ՀՀ կառավարության կրթական բարեփոխման ռազմավարության գերակա խնդիր էր համարում կրթության որակի բարելավումը:Մասնավորապես, ծրագրով նախատեսվում էր առարկայացնել նախորդ կառավարությունների տեսլականը կրթության որակի վերաբերյալ: Այն է՝ նախակրթարաններում 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածության

[6] https://www.times.am/?p=161992&l=am
[7] http://www.cfep.am/hy/archived/

բարձրացում, նախադպրոցական կրթության որակի բարելավում և յուրաքանչյուր երեխայի շարունակական զարգացում՝ հաշվի առնելով երեխայի անհատական կարիքներն ու կարողությունները, միջնակարգ կրթության որակի բարելավում՝ կատարելագործելով կրթակարգն ու ուսումնական ծրագրերը, տեղեկատվական տեխնոլոգիաները հանրակրթության ոլորտում ինտեգրման քաղաքականության շարունակում, ՏՀ տեխնոլոգիաները՝ որպես արդյունավետ ուսուցման և դասավանդման գործիքի կիրառման խթանում, կրթության որակի և համապատասխանության բարելավում՝ ավագ դպրոցների ցանցում, բարձրագույն կրթության որակի, համապատասխանության և մատչելիության բարձրացում: Փաստորեն այս հինգ խնդիրների լուծումը խթանելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված կրթության ոլորտում Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ և «Կրթության բարելավում» վարկային ծրագրերի նախաձեռնումը և իրագործումը: Ընդգրկելով կրթության բոլոր մակարդակները նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթության բարելավում ծրագիրը միտված էր միջազգային լավագույն չափորոշիչներին համահունչ ծառայություններ մատուցող կրթական համակարգի ստեղծմանը, գիտական և հետազոտական աշխատանքների խրախուսմանը:

«Կրթության բարելավում» ծրագրի «Հանրակրթության որակի բարելավում՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթածրագրի շրջանակում նախատեսվում էր առարկայական չափորոշիչների վերանայման գործընթացը: Ծրագրով նախատեսվում է նաև վերապատրաստման մոդուլների մշակում, ձևավորված առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկում դպրոցում, վերապատրաստումներ ուսուցիչների համար՝ ներկայացնելու

վերափոխված առարկայական չափորոշիչները և ծրագրերը դպրոցներում, սեմինարների կազմակերպում՝ դասագրքեր մշակողների համար:[8]

ՀՀ հանրակրթության ոլորտի վերջին տասնամյակի բարեփոխումների ռազմավարության կարևոր բաղադրիչներից է կրթությունն իրավունքի միջոցով իրականացնելը: Երեխաների կրթության իրավունքի իրացման նպատակով 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ են կատարվում, ըստ որոնց նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն նոր օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը Հանրապետությունում պետք է ներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգ, որը կապահովի յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունք[9]: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացակարգերի, ներառական կրթության ծախսերի արդյունավետության, ինչպես նաև ոլորտի նկատմամբ վերահսկողության թերությունները նոր մարտահրավեր են դարձել ներառող կրթության իրականացման համար:[10]

[8] http://escs.am/am/news/4897
[9] http://www.irtek.am/views/act.aspx?aid=30064
[10] http://www.justice.am/storage/uploads/001_riskeri_gnahatum.pdf

2019թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ՝ «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի կողմից, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվում է «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում կատարվել է 60 վերապատրաստող-մենթորի ընտրություն, որոնք Հայաստանի տարբեր դպրոցներում իրականացնում են վերապատրաստում և մենթորական աջակցություն՝ առարկայական ուսուցիչների ներառական կրթության մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով:[11]

Ծրագիրը հնարավորություն է ընձեռել ոչ միայն նոր մեթոդաբանությամբ և գործիքակազմով մտնել դպրոց, այլ ներսից հիմնովին ուսումնասիրել դպրոցների կրթական կարիքները, որոնք լուրջ գիտական վերլուծությունների հիմք կարող են հանդիսանալ կրթության նոր ռազմավարության մշակման համար:

Ընդհանրապես, հանրակրթության բարեփոխումների յուրաքանչյուր փուլի համար մշակված քաղաքականությունը և դրա իրականացման արդյունքները գիտական ուսումնասիրության կարիք ունեն, մանավանդ որ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը արմատական վերափոխումների նոր փուլ է թևակոխել:
30 տարիների անարդյունավետ բարեփոխումներից հետո ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել կրթության զարգացման նոր փուլի քաղաքականության մշակմանը՝ նպատակ համարելով ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագրի նախագծում որդեգրել այնպիսի մոտեցումներ, որոնք կապահովեն կրթության կայուն

[11] http://escs.am/am/news/5607

զարգացման առավել նպատակասլացություն և արդյունավետություն:[12] ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ վերանայվում են Հանրակրթության պետական չափորոշիչը և առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: ԿԳՄՍ-ն ձեռնամուխ է եղել նոր չափորոշիչների ներդրմանը, որը մեղմ ասած առաջացրել է դժգոհություններ թե՛ գիտական և թե՛ մանկավարժական հանրույթներում: Սակայն մի հարցում միակարծիք են բոլորը՝ Հայաստանի կրթական համակարգի երեսուն տարի տևած բարեփոխումները ոչ միայն չեն բարելավել կրթական համակարգը այլ դարձել են մարտահրավեր հայ հասարկության համար:

[12] https://www.e-draft.am/projects/528/justification

Եզրակացություն:

Բնական և անշրջելի համարելով Հայաստանի Հանրապետության անկախության սկզբնավորման առաջին տարիներից ի վեր սկիզբ առած հանրակրթական համակարգի բարեփոխումների քաղաքականությունը, որն ի սկզբանե նպատակ է հետապնդել վերացնել կրթության և ժամանակաշրջանի պահանջների միջև անջրպետը, կրթությունը մոտեցնել ժողովրդական տնտեսության պահանջներին, իսկ 1998 թվականից բարեփոխումների ռազմավարության հիմքում դրել կրթության որակի բարձրացման խնդիրը, անհրաժեշտ ենք համարում ընդունել մարտահրավերները, գտնել դրանց հաղթահարելու ճանապարհները, գիտական լուրջ հետազոտությունների դաշտ տեղափոխել բարեփոխումների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը, պայմանավորելով այն Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման գործընթացով: Կարծում ենք կրթական համակրագի բարեփոխումների անհաջողությունները հիմնականում կապված են մոտիվացիայի պակասի հետ: Բարեփոխումների քաղաքականություն մշակելիս առանձնակի ուշադրություն չի դարձվել մոտիվացիայի խնդրին, ընդ որում թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների:

Ինչպես յուրաքանչյուր զարգացող երկիր Հայաստանը նույնպես փորձում է կրթության և գիտության միջոցով հասնել տնտեսական զարգացման: Սակայն բարեփոխումների քաղաքականության իրականացումն դատապարտված էր ձախողման առանց նյութատեխնիկական բազայի և ուսուցիչների մանկավարժական որակյալ կադրերի ապահովության: Ինչպես կարելի է խոսել գիտական նվաճումների մասին, եթե դպրոցներում ֆիզիկայի տարրական փորձերի

համար նախատեսված սարքավորումներ չկան, քիմիական փորձերի համար նյութեր չկան: Չկան համապատասխան սպորտդահլիճներ, որոնք պիտի նպաստեն առողջ և ֆիզիկական դաստիարակություն ստացած սերնդի ապահովմանը: Ի վերջո մարդկային կապիտալի անտեսման հանգամանքը հանգեցրել է նրան, որ տարիներ շարունակ իրականացվող բարեփոխումների հանգամանորեն շարադրված ծրագրերը, չնայած հսկայական ֆինանսական միջոցների ներդրման, այդպես էլ մնացել են թղթի վրա:

Բարեփոխումների մշակված քաղաքականությունը հիմնված չլինելով լուրջ գիտական ուսումնասիրությունների վրա, ավելին՝ համաձայնեցված լինելով ամերիկյան և եվրոպական արժեքների հետ ոչ միայն չի լուծել հայկական դպրոցի խնդիրները, այլ նոր խնդիրներ է առաջացրել, խաթարել մեր դարավոր պատմական նկարագիրը: կրթության համակարգը հեռու է պահել իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, առաջացրել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

Բարեփոխումների քաղաքականութան հաջողությունը մեծապես կապված է նաև նպատակի ճիշտ սահմանման հետ: Դեմ չլինելով կրթության որակի բարձրացման և արդիականացման նպատակներին, որ ամրագրված են բարեփոխումների իրար հաջորդող ծրագրերում, այնուամենայնիվ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության գլխավոր և առաջնային նպատակը պետք է համարել ազգային-պետական շահերին համապատասխան կրթություն ապահովելը, հանրակրթության բովանդակությունը մեր կրթական պահանջներին համապատասխանեցնելը՝ հիմքում դնելով հայեցի դաստիարակությունը և ազգային արժեքների փոխանցումը: Հանրակրթության բարեփոխումները պետք է իրագործվեն այդ

նպատակի իրականացման համար, ազգային պետական ծրագրի շրջանակներում հայ մասնագեների մասնակցությամբ, ուսուցիչների և աշակերտների կարծիքների հաշվառմամբ, համապատասխան մեթոդների և գործիքների կիրառմամբ, մարդկային ռեսուրսների արդյունավետ ռազմավարական կառավարման համակարգի ստեղծմամբ:Հետևաբար անհրաժեշտ է այսուհետմինչև բարեփոխումների իրականացումը, մինչև որոշման ընդունումը իրականացնել հետազոտություն և վերլուծություն, հաշվի առնել ռիսկերը, բարեփոխման ուժեղ և թույլ կողմերը:

Օգտագործված գրականության ցանկ

1.https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120940
2.http://www.cfep.am/hy/archived/
3.http://www.irtek.am/views/act.aspx?aid=7157
4. https://hkdepo.am/up/docs/ 20 eduction_21.02.pdf
5. https://www.times.am/?p=161992&l=am
6. http://escs.am/am/news/4897
7.http://www.irtek.am/views/act.aspx?aid=30064
8. http://www.justice.am/storage/uploads/001_riskeri_gnahatum.pdf
9. Ս. Խաչատրյան, Ս. Ս.Պետրոսյան, Գ. Թերզյան, Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում , Եր, 2013թ